ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մեր Մկրտչյան 5բ, հեռ.՝ (+374 10) 54 56 37, ֆաքս (+374 10) 54 39 85
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«20» 01 2012 թ.
№ ՀՀՇ-183

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի

տնօրեն Շ.Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր կողմից ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական Հանձնաժողովին ուղղված հարցմանը, տեղեկացնում ենք.

1.Կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունները Հանձնաժողովին տեղեկացրել են, որ ներկայումս իրենց արտադրանքի բաղադրության, հետևապես նաև որակի հետ կապված որևէ խնդիր գոյություն չունի:Սակայն, որպես կանոն, Հանձնաժողովը չի բավարարվում միայն տնտեսվարողի կողմից տրամադրված տեղեկատվությամբ և պետական այլ գերատեսչությունների, մասնավորապես ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հետ համագործակցության միջոցով հետևողական է լինելու, որպեսզի խախտումն ամբողջությամբ վերացվի: Տեղեկացնենք նաև, որ «Աշտարակ կաթ» ընկերությունը արդեն իսկ պետբյուջե է վճարել տուգանքն ամբողջությամբ, «Մարիաննա» ընկերությունը որոշակի ժամկետ է խնդրել, որի ընթացքում պարտավորվել է վճարել տուգանքը, իսկ «Անի» ընկերությունը վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովին:

2. Հանձնաժողովը կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող օրինախախտ ընկերություններին հանձնարարել է որոշման հրապարակումից հետո 10 օրյա ժամկետում վերացնել խախտումը և արտադրվող կաթնամթերքի բաղադրությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված պահանջներին: Հարկ ենք համարում ընդգծել, որ Հանձնաժողովը խախտումները հայտնաբերել է ընկերությունների մաքսային և ներքին շրջանառության փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում և միայն որպես լրացուցիչ ապացույց կաթնամթերքի որոշ նմուշներ հանձնվել են փորձաքննության, ինչի արդյունքում էլ լրացուցիչ կերպով հաստատվել են նախապես փաստաթղթերով հայտնաբերված խախտումները: Հանձնաժողովը չունի սեփական լաբորատորիա և նման դեպքերում փորձաքննությունը պատվիրվում է զուգահեռաբար մի քանի լաբորատորիաներում:

Քանի որ սննդամթերքի որակի հետ կապված խնդիրները առաջնահերթ գտնվում են ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության դաշտում, ապա Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության ողջ փաթեթը ուղարկվել է

վերոնշյալ պետական գերատեսչությանը, որն էլ կաթնամթերքի կրկնակի որակական ստուգումից հետո Հանձնաժողովին կտեղեկացնի, թե ինչքանով է շտկվել իրավիճակը:

Հարգանքով՝ Ա. Շաբոյան

Կատ՝ Գ.Մահակյան
հեռ. 544004